**Գ6.** Մասնագիտական բարեվարքության կանոններին հետևելով՝ պատասխանատվությամբ իրականացնել մանկավարժի իր գործառույթները:

**Գ7.** Մայրենի, ռուսերեն և որևէ օտար լեզվով տրամաբանորեն ճիշտ փաստարկված և հստակ կառուցելու բանավոր ու գրավոր խոսք մասնագիտական հանրություն:

**11. Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.**

- գործնական պարապմունք,
- անհատական և խմբային աշխատանք,
- անհատական և թիմային գիտահետազոտական աշխատանք,
- ինքնուրույն աշխատանք,
- բանավոր ներկայացում/ պրեզենտացիա (անհատական ինքնուրույն նախագծի իրականացում),
- գրավոր և բանավոր ստուգում/ հարցում,
- իրավիճակային խնդիրների քննարկում:

**12. Գնահատման մեթոդները և չափանիշներն են.**

Ստուգարքը անց է կացվում նախապես տրված առաջադրանքների հիման վրա:

**13. Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից.**

**Թեմա 1.** Ֆրանսերեն լեզվի բառապաշարային, քերականական և ոճաբանական յուրահատկությունները: **Թեմա 2.** Մասնագիտական տեքստերի գործառական նշանակությունը և դրանց իրացումը անգլերեն լեզվով գրավոր ու բանավոր հաղորդակցման գործընթացում: **Թեմա 3.** Ակադեմիական գրագրություն՝ գիտական հոդվածների ու աշխատությունների, գրախոսությունների և ամփոփումների, ինչպես նաև ռեֆերատների, զեկուցումների, էսսեների շարադրման ձևերն ու սկզբունքները: **Թեմա 4.** Մասնագիտական բնագիր տեքստերի, դասախոսությունների, ձայնագրությունների ունկնդրմամբ՝ դրանց բովանդակության վերծանման, վերարտադրության առանձնահատկությունները:

**14. Հիմնական գրականության ցանկ.**

1. Méthode rapide pour adultes "Vite et bien 1" Claire Miquel, Clé internationale 2009.

1.0303/ Մ 08	2.Մասնագիտության արդի հիմնախնդիրները	3.3 ECTS կրեդիտ
4.4ժամ/շաբաթ	5.12/0/0	
6. 1-ին կիսամյակ	7.առանց ընթացիկ գնահատման	
<p><b>8.Դասընթացի նպատակն է՝</b> ուսանողներին ներկայացնել այն հիմնախնդիրները, որոնք առկա են մանկավարժական գործունեության մեջ, մեկնաբանել կրթության համակարգերի զարգացման ուղիները, մեկնաբանել կրթական նոր հարացույցները, որոնք էականորեն փոխում են ուսուցման նպատակը, բովանդակությունը, կազմակերպման ձևերն ու մեթոդները, ուսուցիչ-աշակերտ փոխհարաբերությունները:</p>		
<p><b>9.Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝</b></p> <p><i>ա. մասնագիտական գիտելիք և իմացություն</i></p> <ul style="list-style-type: none"> <li>• մեկնաբանելու մանկավարժության մեջ առկա հիմնախնդիրները,</li> <li>• ներկայացնելու մանկավարժության սկզբունքների միջև եղած տրամաբանական կապը,</li> </ul>		

- գիտակցելու ուսուցման մեթոդաբանությունը,

***բ. գործնական մասնագիտական կարողություններ***

- վերլուծելու կրթական հարացույցների դերը,
- մեկնաբանելու կրթության համակարգերի զարգացման տարբեր ուղիների արդյունավետությունը,
- կիրառելու մանկավարժության սկզբունքների դրույթներն ուսուցման գործընթացում:
- մանկավարժական ցանկացած հիմնախնդրի մոտենալու վերլուծահամադրական մտածողությամբ:
- օբյեկտիվորեն գնահատելու ստացած նոր տեղեկատվության որակն ու արժեքը,

**10. Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնարդյունքները.**

**Ա1.** Մեկնաբանելու արդի կրթական համակարգերի կազմակերպման մեթոդաբանությունը, իրավական հենքը, մարտահրավերները, տեխնոլոգիաները, ուսուցմա որակի առանցքային դրույթները:

**Ա2.** Մեկնաբանելու մանկավարժական տեսությունների զարգացումները, մանկավարժագիտության հիմնական հասկացությունները, հայեցակարգերը, կրթական համակարգերի զարգացման փուլերը, կրթության որակի չափորոշիչները:

**Բ1.** Կառավարելու, նախագծելու, կառուցելու, իրականացնելու և գնահատելու սեփական մանկավարժական գործունեությունը:

**Գ4.** Պատասխանատվություն ստանձնելու համագործակցային միջավայրի հետ փոխներգործության բնույթը, ինքնազարգացման պայմանները:

**Գ5.** Մասնագիտական և ոչ մասնագիտական հանրությանը խորությամբ, համակողմանիորեն, համակարգված և փաստարկված ներկայացնելու ու բացատրելու մանկավարժության ոլորտին առնչվող տեղեկատվություն, գաղափարներ, բարդություն տարբեր աստիճանի խնդիրներ ու լուծումներ:

**Գ6.** Մասնագիտական բարեվարքության կանոններին հետևելով՝ պատասխանատվությամբ իրականացնել մանկավարժի իր գործառույթները:

**11. Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.**

- դասախոսություն,
- նյութի քննարկումներ,
- ռեֆերատների ներկայացում:



**12. Գնահատման մեթոդները և չափանիշներն են.**

Բանավոր քննություն՝ 20 միավոր առավելագույն արժեքով:

**13. Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից.**

**Թեմա 1.** Մանկավարժությունը մարդուն ուսումնասիրող գիտությունների շարքում: **Թեմա 2.** Մանկավարժության ուսումնասիրության օբյեկտն ու առարկան: **Թեմա 3.** Մանկավարժության մեջ առկա հիմնախնդիրները: **Թեմա 4.** Մանկավարժության սկզբունքները: **Թեմա 5.** Կրթության համակարգերի զարգացման ուղիները: **Թեմա 6.** Կրթական նոր հարացույցներ:

**14. Հիմնական գրականության ցանկ**

1. Бордовская И.В., Реан А.А., Педагогика, М., 2006.
2. Коджаспирова Г.М., Педагогика, М., 2004.
3. Подласый И.П., Педагогика, М., 2006.
4. Хуторской А.В., Педагогическая инноватика, М., 2008.

0303/ Մ 10	2. Ընդհանուր մանկավարժություն	3.3 ECTS կրեդիտ
4. 4 ժամ/շաբաթ	5. 12/0/0 ժամ	
6.1-ին կիսամյակ	7. առանց ընթացիկ գնահատման	
<p><b>8. Դասընթացի նպատակն է սովորողներին ներկայացնել ընդհանուր մանկավարժության նպատակը, խնդիրները, մանկավարժության հասկացությունները, հիմնական գիտաճյուղերը, ներկայացնել անձի ձևավորման հիմնախնդիրը:</b></p>		
<p><b>9. Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝</b></p> <p><i>ա. մասնագիտական գիտելիք և իմացություն</i></p> <ul style="list-style-type: none"> <li>• սահմանելու մանկավարժության հիմնական հասկացությունները,</li> <li>• ներկայացնելու անձի ձևավորման հիմնախնդիրը,</li> <li>• դասակարգելու մանկավարժության առաջադիր խնդիրները մարդու մասին գիտությունների շարքում,</li> <li>• քննարկելու դաստիարակության հիմնական մեթոդները, ձևերն ու միջոցները:</li> </ul> <p><i>բ. գործնական մասնագիտական կարողություններ</i></p> <ul style="list-style-type: none"> <li>• համեմատելու տարբեր մանկավարժ-տեսաբանների մոտեցումները մանկավարժության հիմնական հասկացությունների վերաբերյալ,</li> </ul>		

- փաստարկելու անձի ձևավորման հիմքում ընկած հիմնական գործոնների հարաբերակցությունը,
- արժևորելու և գնահատելու մանկավարժության նշանակությունն անձի ձևավորման և զարգացման գործում,
- կանխատեսելու դաստիարակության գործընթացում հավանական և սպասվելիք արդյունքներն ու թերությունները:

**գ. ընդհանրական (փոխանցելի) կարողություններ**

- գնահատելու ստացած նոր տեղեկատվության որակն ու արժեքը,
- վերլուծելու անձի սոցիալականացման գործոնները:

**10. Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնարդյունքները.**

**Մ2.** Մեկնաբանելու մանկավարժական տեսությունների զարգացումները, մանկավարժագիտության հիմնական հասկացությունները, հայեցակարգերը, կրթական համակարգերի զարգացման փուլերը, կրթության որակի չափորոշիչները:

**Մ3.** Նկարագրելու երեխայի և մեծահասակի, որպես ուսուցման սուբյեկտների, գործունեության հոգեբանական, տարիքային, անհատական առանձնահատկությունները և կիրառելու կոնֆլիկտների հաղթահարման ուղիները տարբեր տարիքի երեխաների զարգացման գործընթացում:

**Մ4.** Ներկայացնելու անձի սոցիալականացման օրինաչափությունները և հաղորդակցման ձևերը:

**Բ1.** Կառավարելու, նախագծելու, կառուցելու, իրականացնելու և գնահատելու սեփական մանկավարժական գործունեությունը:

**Բ4.** Կանխատեսելու ուսուցման գործընթացում հավանական և սպասվելիք արդյունքներն ու թերությունները:

**Գ1.** Քննադատաբար վերլուծելու և վերակառուցելու կրթության գործընթացը, օբյեկտիվորեն գնահատելու ստացած նոր տեղեկատվության որակն ու արժեքը, կիրառելու տարբեր ոլորտներում ձեռք բերված գիտելիքները:

**Գ6.** Մասնագիտական բարեվարքության կանոններին հետևելով՝ պատասխանատվությամբ իրականացնել մանկավարժի իր գործառույթները:

**11. Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.**

- դասախոսություն

<p><b>12. Գնահատման մեթոդները և չափանիշները.</b></p> <p>Բանավոր քննություն՝ առավելագույնը 20 միավոր արժեքով:</p>
<p><b>13. Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից.</b></p> <p><b>Թեմա 1.</b> Ընդհանուր մանկավարժության նպատակը, խնդիրները: <b>Թեմա 2.</b> Ընդհանուր մանկավարժության հիմնական հասկացությունները և կապն այլ գիտությունների հետ: <b>Թեմա 3.</b> Մանկավարժության հիմնական գիտաճյուղերը: <b>Թեմա 4.</b> Անձ: Անձի ձևավորում: Գործոններ: Սոցիալականացում: <b>Թեմա 5.</b> Դաստիարակություն: Դաստիարակության հիմնական սկզբունքները, մեթոդները և ձևերը:</p>
<p><b>14. Հիմնական գրականության ցանկ</b></p> <ol style="list-style-type: none"> <li>1. Ամիրջանյան Յու., «Մանկավարժություն», Երևան, 2005:</li> <li>2. Ղուլումջյան Գ., Մանկավարժություն, Երևան, 2005:</li> <li>3. Педагогика: учебник для бакалавров / Л. П. Крившенко; под ред. Л. П. Крившенко, Москва, 2013.</li> <li>4. Коджаспирова Г.М., Педагогика, учебник / Г.М. Коджаспирова. М., 2010.</li> <li>5. Ковалева Е.В., История педагогики и образования, учеб. метод. пособие, 2013.</li> </ol>

0303/Մ 11	2. Ընդհանուր հոգեբանություն	3. 3 ECTS կրեդիտ
4. 4 ժամ/շաբաթ	5. 6/6/0 ժամ	
6. 1-ին կիսամյակ	7. առանց ընթացիկ գնահատման	
<p><b>8. Դասընթացի նպատակն է ձևավորել հոգեկան գործունեության ընդհանուր օրինաչափությունների, հիմնարար կատեգորիաների, տեսությունների և հիմնական մեթոդների մասին ամբողջական գիտելիքներ:</b></p>		
<p><b>9. Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝</b></p> <p><i>ա. մասնագիտական գիտելիք և իմացություն</i></p> <ul style="list-style-type: none"> <li>• ներկայացնելու ընդհանուր հոգեբանության տեսական հիմքերը,</li> <li>• մեկնաբանելու հոգեկանի կառուցվածքը, զարգացման օրինաչափությունները</li> </ul> <p><i>բ. գործնական մասնագիտական կարողություններ</i></p> <ul style="list-style-type: none"> <li>• վերլուծելու հոգեկանի զարգացման օրինաչափությունները</li> <li>• կանխատեսելու հոգեկանի զարգացման փոփոխությունները,</li> </ul> <p><i>գ. ընդհանրական (փոխանցելի) կարողություններ</i></p>		

- տիրապետելու հոգեկան գործընթացների, վիճակներին հատկությունների վերլուծության միջոցներին
- տիրապետելու անձի գործունեության տարբեր տեսակների վերլուծության միջոցներին

**10. Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնարդյունքները.**

**Ա3.** Նկարագրելու երեխայի և մեծահասակի, որպես ուսուցման սուբյեկտների, գործունեության հոգեբանական, տարիքային, անհատական առանձնահատկությունները և կիրառելու կոնֆլիկտների հաղթահարման ուղիները տարբեր տարիքի երեխաների զարգացման գործընթացում:

**Ա4.** Ներկայացնելու անձի ձևավորման հիմնախնդիրը՝ դիտարկելով կոնֆլիկտների հաղթահարման ուղիները տարբեր տարիքի երեխաների զարգացման գործընթացում:

**Բ3.** կազմակերպելու դասավանդողի և ուսումնառողի համատեղ գործունեությունը՝ ապահովելով սուբյեկտ-սուբյեկտ փոխհարաբերությունների կառուցումը, խորհրդատվության կիրառումը ուսումնադաստիարակչական գործընթացում,

**Բ4.** Կանխատեսելու ուսուցման գործընթացում հավանական և սպասվելիք արդյունքներն ու թերությունները:

**Գ1.** Քննադատաբար վերլուծելու և վերակառուցելու կրթության գործընթացը, օբյեկտիվորեն գնահատելու ստացած նոր տեղեկատվության որակն ու արժեքը, կիրառելու տարբեր ոլորտներում ձեռք բերված գիտելիքները:

**Գ4.** պատասխանատվություն ստանձնելու համագործակցային միջավայրի ստեղծման ու կառավարման և համատեղ գործունեության արդյունքների համար:

**11. Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.**

- դասախոսություն՝ տեսասահիկների ուղեկցությամբ
- գործնական վարժություններ
- հոգեբանական մեթոդների կիրառում

**12. Գնահատման մեթոդները և չափանիշները.**

Բանավոր քննություն՝ առավելագույնը 20 միավոր արժեքով:

**13. Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից.**

**Թեմա 1.** Հոգեբանության առարկան, խնդիրները, մեթոդաբանական հիմքերը **Թեմա 2.** Հոգեկանի կառուցվածքը, մակարդակները, գործընթացներ **Թեմա 3.** Հոգեկան վիճակներ, հոգեկան

հատկություններ **Թեմա 4.** Գործունեություն, տեսակները **Թեմա 5.** Հաղորդակցում: **Թեմա 6.**  
 Սոցիալական խմբեր, տեսակները:

**14. Հիմնական գրականության ցանկ**

1. Փիլոսոֆիայի հոգեբանություն, Ուսումնական ձեռնարկ, Երևան, 2019, 598 էջ
2. Еникеев М. И., Общая и социальная психология, М., Норма, 1999, 624с.
3. Маклаков А.Г. Общая психология. – СПб. :Питер, 2012. – 583с.
4. Рубинштейн С.Л., Основы общей психологии, Питер, 2012, 720с

1.0303/ Մ 12	2.Տարիքային մանկավարժություն	3.3 ECTS կրեդիտ
4.4Ժամ/շաբաթ	5.12/0/0	
6.1-ին կիսամյակ	7. առանց ընթացիկ գնահատման	
<p><b>8.Դասընթացի նպատակն է՝</b> ուսանողներին ներկայացնել այն հիմնախնդիրները, որոնք առկա են մանկավարժության մեջ, ծանոթացնել տարբեր տարիքի երեխաների տարիքային, հոգեբանական և անհատական առանձնահատկություններին:</p>		
<p><b>9.Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝</b></p> <p><i>ա. մասնագիտական գիտելիք և իմացություն</i></p> <ul style="list-style-type: none"> <li>• ներկայացնելու երեխայի անձի ձևավորման գործընթացը՝ հենվելով ուսումնասիրված տարիքային հոգեբանության գիտելիքների վրա.</li> <li>• տարբերելու տարիքային մանկավարժության տեղն ու դերը մանկավարժության գիտության համատեքստում.</li> <li>• վերլուծելու ուսուցման տարբեր մեթոդների կիրառման առանձնահատկությունները, օրինաչափությունները՝ հաշվի առնելով տարիքային առանձնահատկությունները</li> <li>• մեկնաբանելու կրթական ժամանակակից տեխնոլոգիաների կիրառումը ուսուցման գործընթացում ըստ տարիքային առանձնահատկությունների</li> </ul> <p><i>բ. գործնական մասնագիտական կարողություններ</i></p> <ul style="list-style-type: none"> <li>• կիրառելու տեսական գիտելիքները գործնականում:</li> <li>• հաշվի առնելու ուսուցման գործընթացում երեխայի տարիքային և անհատական առանձնահատկությունները</li> <li>• մանկավարժական ցանկացած հիմնախնդիր լուծելու վերլուծահամադրական մտածողությամբ:</li> </ul>		

- օբյեկտիվորեն գնահատելու ստացած նոր տեղեկատվության որակն ու արժեքը,

**գ. ընդհանրական (փոխանցելի) կարողություններ**

- գնահատելու ստացած նոր տեղեկատվության որակն ու արժեքը,

**10. Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնարդյունքները.**

**Ա2.** Մեկնաբանելու մանկավարժական տեսությունների զարգացումները, մանկավարժագիտության հիմնական հասկացությունները, հայեցակարգերը, կրթական համակարգերի զարգացման փուլերը, կրթության որակի չափորոշիչները:

**Ա3.** Նկարագրելու երեխայի և մեծահասակի, որպես ուսուցման սուբյեկտների, գործունեության հոգեբանական, տարիքային, անհատական առանձնահատկությունները և կիրառելու կոնֆլիկտների հաղթահարման ուղիները տարբեր տարիքի երեխաների զարգացման գործընթացում:

**Ա4.** Ներկայացնելու անձի սոցիալականացման օրինաչափությունները և հաղորդակցման ձևերը:

**Բ1.** Կառավարելու, նախագծելու, կառուցելու, իրականացնելու և գնահատելու սեփական մանկավարժական գործունեությունը:

**Բ3.** Կազմակերպելու դասավանդողի և ուսումնառողի համատեղ գործունեությունը՝ ապահովելով սուբյեկտ-սուբյեկտ փոխհարաբերությունների կառուցումը, խորհրդատվության կիրառումը ուսումնառաստիարակչական գործընթացում:

**Գ6.** Մասնագիտական բարեվարքության կանոններին հետևելով՝ պատասխանատվությամբ իրականացնել մանկավարժի իր գործառույթները:

**11. Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.**

- դասախոսություն,
- նյութի քննարկումներ,
- ռեֆերատների ներկայացում:

**12. Գնահատման մեթոդները և չափանիշները.**

Բանավոր քննություն՝ առավելագույնը 20 միավոր արժեքով:

**13. Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից.**

**Թեմա 1.** Տարիքային մանկավարժության որպես ընդհանուր մանկավարժության բաղադրիչ: **Թեմա 2.** Տարիքային մանկավարժության էությունը, նպատակը, խնդիրները: **Թեմա 3.** Մինչնախադպրոցական և նախադպրոցական տարիք, նրանց առանձնահատկությունները: **Թեմա 4.** Կրտսեր դպրոցական տարիք, նրա առանձնահատկությունները: **Թեմա 5.** Միջին դպրոցական տարիքի առանձնահատկությունները: **Թեմա 6.** Ավագ դպրոցական տարիքի առանձնահատկու-

թյունները: **Թեմա 7.** Անչափահասների դաստիարակության խնդիրները և դրանց իրականացումը շուկայական հարաբերությունների արդի փուլում:

**14. Հիմնական գրականության ցանկ**

1. Склорова Т.В., Янушкявичене О.Л., Возрастная педагогика и психология, М., 2004
2. Белкин А.С., Основы возрастной педагогики, М., 2000
3. Гамезо М.В. и др., Возрастная и педагогическая психология, М.2003
4. Бордовская И.В., Реан А.А., Педагогика, М.,2006
5. Хуторской А.В., Педагогическая инноватика, М., 2008

<b>1. 0303/ Մ 13</b>	<b>2. Ուսուցման տեսություն</b>	<b>3. 3 ECTS կրեդիտ</b>
----------------------	--------------------------------	-------------------------

<b>4.4 Ժամ/շաբաթ</b>	<b>5.6/6/0</b>
----------------------	----------------

<b>6.1-ին կիսամյակ</b>	<b>7. առանց ընթացիկ գնահատման</b>
------------------------	-----------------------------------

**8. Դասընթացի նպատակն** է քննարկել տեսության հիմնահարցերը, ուսուցման սկզբունքները, մեթոդները, դիտարկել ուսուցման գործընթացի կազմակերպման հիմնախնդիրները:

**9. Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝**

***ա. մասնագիտական գիտելիք և իմացություն***

- ներկայացնելու ուսուցման տեսության /Դիդակտիկա/ առարկան, նպատակը, խնդիրները, հիմնական հասկացությունները, կրթության բովանդակության գիտական հիմքերը և սկզբունքները, ուսումնական գործընթացի էությունը,
- վերլուծելու ուսումնական գործընթացի էությունը, դիդակտիկայի օբյեկտն ու առարկան, դիդակտիկայի խնդիրներն ու գործառույթները, «Ուսուցում» հասկացությունն ու դրա էությունը,
- նկարագրելու կրթության բովանդակությունն արտահայտող փաստաթղթեր,
- դիտարկելու ուսուցման գործընթացի սահմանումը, ուսուցման գործընթացի երկկողմ բնույթը, ուսուցման գործընթացի շարժիչ ուժերը:

***բ. գործնական մասնագիտական կարողություններ***

- նախագծելու դասը որպես ուսուցման կազմակերպման հիմնական ձև, ուսուցման կազմակերպման մյուս ձևերը, սովորողների ուսումնական գործունեության վերահսկողությունը և գնահատումը,
- գործածելու դասի տիպերը,

- մեկնաբանելու դասի կառուցվածք տրամաբանությունը:

**գ. ընդհանրական (փոխանցելի) կարողություններ**

- տիրապետելու ուսուցման կազմակերպման և անցկացման հմտությունների,
- տիրապետելու աշակերտների գիտելիքների գնահատման հմտությունների:

**10.Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնարդյունքները.**

**Ա1.** Մեկնաբանելու արդի կրթական համակարգերի կազմակերպման մեթոդաբանությունը, իրավական հենքը, մարտահրավերները, տեխնոլոգիաները, ուսուցմա որակի առանցքային դրույթները:

**Ա2.** Մեկնաբանելու մանկավարժական տեսությունների զարգացումները, մանկավարժագիտության հիմնական հասկացությունները, հայեցակարգերը, կրթական համակարգերի զարգացման փուլերը, կրթության որակի չափորոշիչները:

**Ա6.** Վերհանելու կրթության սուբյեկտների կրթական պահանջումները և զարգացումը, կրթական միջավայրի հետ փոխներգործության բնույթը, ինքնազարգացման պայմանները:

**Ա7.** Կիրառելու տարբերակման և անհատականացման սկզբունքը ուսուցման բնագավառում:

**Բ1.** Կառավարելու, նախագծելու, կառուցելու, իրականացնելու և գնահատելու սեփական մանկավարժական գործունեությունը:

**Բ4.** Կանխատեսելու ուսուցման գործընթացում հավանական և սպասվելիք արդյունքներն ու թերությունները:

**Գ2.** Նոր և անձանոթ իրադրություններում կիրառելու ուսուցման ոլորտի հայեցակարգային և մեթոդաբանական սկզբունքները տեսական և գործնական խնդիրների համար:

**Գ5.** Մասնագիտական և ոչ մասնագիտական հանրությանը խորությամբ, համակողմանիորեն, համակարգված և փաստարկված ներկայացնելու ու բացատրելու մանկավարժության ոլորտին առնչվող տեղեկատվություն, գաղափարներ, բարդություն տարբեր աստիճանի խնդիրներ ու լուծումներ:

**Գ6.** Մասնագիտական բարեվարքության կանոններին հետևելով՝ պատասխանատվությամբ իրականացնել մանկավարժի իր գործառույթները:

**11. Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.**

- պրոբլեմային դասախոսություններ
- նախագծային աշխատանք



- տեսադիտումներ,
- մտքի քարտեզավորում,
- ուղղորդիչ տեքստի մեթոդ:

**12. Գնահատման մեթոդները և չափանիշները.**

Բանավոր քննություն՝ առավելագույնը 20 միավոր արժեքով:

**13. Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից.**

**Թեմա 1.** Ուսուցման տեսության /Դիդակտիկա/ առարկան, նպատակը, խնդիրները, հիմնական հասկացությունները: **Թեմա 2.** Կրթության բովանդակության գիտական հիմքերը և սկզբունքները: Կրթության բովանդակությունն արտահայտող փաստաթղթեր: **Թեմա 3.** Ուսումնական գործընթացի էությունը: Դիդակտիկայի օբյեկտն ու առարկան: Դիդակտիկայի խնդիրներն ու գործառույթները: **Թեմա 4.** «Ուսուցում» հասկացությունն ու դրա էությունը: Ուսուցման գործընթացի սահմանումը: Ուսուցման գործընթացի երկկողմ բնույթը: Ուսուցման գործընթացի շարժիչ ուժերը: **Թեմա 5.** Ուսուցման գործառույթները: Ուսման գործընթացի կառուցվածքը: Ուսուցման օրինաչափություններն ու սկզբունքները: **Թեմա 6.** Հասկացողությունն ուսուցման սկզբունքների մասին, դրանց էությունը: Հասկացողությունն ուսուցման մեթոդի և հնարի մասին: Դրանց էությունը: **Թեմա 7.** Ուսուցման մեթոդների դասակարգումը: Ուսուցման կազմակերպման ձևերը, դասը որպես ուսուցման կազմակերպման հիմնական ձև, դասի տիպերը, դասի կառուցվածքը: **Թեմա 8.** Ուսուցման կազմակերպման մյուս ձևերը: Սովորողների ուսումնական գործունեության վերահսկողությունը և գնահատումը:

**14. Հիմնական գրականության ցանկ**

1. Ամիրջանյան Յու., Սահակյան Ա., Մանկավարժություն, 2004:
2. Подласый И., Педагогика, М., 1999.
3. Слостенин В. и др., Педагогика, М., 2000.

1. 0303/ Մ 14	2. Մանկավարժական տեխնոլոգիաներ	ժամանակակից	3. 3 ECTS կրեդիտ
4. 4 ժամ/շաբաթ	5. 6/6/0		
6. 2-րդ կիսամյակ	7. առանց ընթացիկ գնահատման		

**8. Դասընթացի նպատակն** է սովորողներին ներկայացնել դասավանդման և ուսումնառողների ինքնուրույն ուսումնաճանաչողական գործընթացների սկզբունքները, դիտարկել կրթական գործընթացի տեխնոլոգիական սխեման ամբողջության մեջ՝ նպատակադրումից մինչև տրված արդյունքների՝ նպատակների իրականացված լինելու աստիճանի գնահատումը:

**9. Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝**

***ա. մասնագիտական գիտելիք և իմացություն***

- ներկայացնելու մանկավարժական տեխնոլոգիայի էությունը, կառուցվածքը,
- վերլուծելու մանկավարժական տեխնոլոգիայի նախագծման և իրականացման փուլերը, կառուցահատվածները,
- նկարագրելու տեխնոլոգիայի գիտատեսական հիմունքները, մանկավարժական տեխնոլոգիական գործընթացի կազմակերպման սկզբունքները, դաստիարակության և կրթության մանկավարժական համակարգերը,
- նկարագրելու ուսուցման ժամանակակից մեթոդները դրանց դասակարգման հերարխիան տեխնոլոգիական տեսակետից,
- դիտարկելու ուսումնական հաստատությունների կրթական գործունեության կազմակերպման մոդելները, մանկավարժական տեխնոլոգիաների բնագավառում

***բ. գործնական մասնագիտական կարողություններ***

- նախագծելու մանկավարժական տեխնոլոգիաներ՝ ըստ կառուցահատվածների, իրականացնել մանկավարժական դիագնոստիկա, կանխատեսում, հետևում, մշտադիտարկում, շտկում,
- կազմելու տեխնոլոգիական հերթագայության քարտեր տարբեր մեթոդների կիրառությամբ տարբեր տիպի ուսումնական պարապմունքների համար,
- գործածելու տեխնոլոգիական հերթագայության քարտերը, իրականացնելու մանկավարժական գործընթացի արժևորման, գնահատման, ինքնագնահատման և փոխադարձ գնահատման գործընթացներ,
- մեկնաբանելու նորացված տեխնոլոգիաների հիմնական հասկացությունները, դաստիարակության և ուսուցման արդի մեթոդներն ու ձևերը,
- կիրառելու հիմնական մանկավարժական, տեղեկատվության և հաղորդակցման տեխնոլոգիաները, մանկավարժական տեխնոլոգիայում՝ իննովացիոն և ինտերակտիվ մեթոդներ, տեխնիկաներ,

- սեփական մասնագիտական զարգացման գործընթացում ներդնելու և կիրառելու, ուսուցման ժամանակակից տեխնիկական միջոցների,

**գ. ընդհանրական (փոխանցելի) կարողություններ**

- արդյունավետորեն պլանավորելու կրթական ռեսուրսները մասնագիտական գործունեության ընթացքում:

**10. Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնարդյունքները.**

**Ա1.** Մեկնաբանելու արդի կրթական համակարգերի կազմակերպման մեթոդաբանությունը, իրավական հենքը, մարտահրավերները, տեխնոլոգիաները, ուսուցման որակի ապահովման առանցքային դրույթները:

**Ա2.** Մեկնաբանելու մանկավարժական տեսությունների զարգացումները, մանկավարժագիտության հիմնական հասկացությունները, հայեցակարգերը, կրթական համակարգերի զարգացման փուլերը, կրթության որակի չափորոշիչները:

**Ա3.** Նկարագրելու երեխայի և մեծահասակի, որպես ուսուցման սուբյեկտների, գործունեության հոգեբանական, տարիքային, անհատական առանձնահատկությունները:

**Ա7.** Կիրառելու տարբերակման և անհատակացման սկզբունքը ուսուցման բնագավառում:

**Բ1.** Կառավարելու /նախագծել, կառուցել, իրականացնել և գնահատել/ սեփական մանկավարժական գործունեությունը,

**Բ2.** Կիրառելու ուսուցման ակտիվ և ինտերակտիվ մեթոդներ ակտիվ ուսուցման գործընթացում:

**Բ3.** Կազմակերպելու դասավանդողի և ուսումնառողի համատեղ գործունեությունը՝ ապահովելով սուբյեկտ-սուբյեկտ փոխհարաբերությունների կառուցումը, խորհրդատվության կիրառումը ուսումնադաստիարակչական գործընթացում:

**Բ5.** Կիրառելու կրթության բնագավառում հետազոտությունների իրականացման վերաբերյալ փորձարարական տվյալների հավաքագրման և մշակման տեխնոլոգիաներ:

**Բ6.** Իրականացնելու հետադարձ կապ / դասավանդող-ուսումնառող, ուսումնառող-դասավանդող:

**Գ1.** Քննադատաբար վերլուծելու և վերակառուցելու կրթության գործընթացը, օբյեկտիվորեն գնահատելու ստացած նոր տեղեկության որակն ու արժեքը, կիրառելու տարբեր ոլորտներում ձեռք բերված գիտելիքները:

**Գ4.** Պատասխանատվություն ստանձնելու համագործակցային միջավայրի ստեղծման և համատեղ գործունեության արդյունքների համար:

**96.** Մասնագիտական բարեվարքության կանոններին հետևելով՝ պատասխանատվությամբ իրականացնելու մանկավարժի իր գործառույթները:

**11. Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.**

- պրոբլեմային դասախոսություններ
- նախագծային աշխատանք
- ներկայացումների պատրաստում, տեսադիտումներ,
- մտքի քարտեզավորում,
- ուղղորդիչ տեքստի մեթոդ,
- փորձուսուցում /սիմուլիցիա/:

**12. Գնահատման մեթոդները և չափանիշները.**

Բանավոր քննություն՝ առավելագույնը 20 միավոր արժեքով:

**13. Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից.**

**Թեմա 1.** Ուսուցման ժամանակակից տեխնոլոգիաները մասնագիտական կրթության ոլորտում առարկայի նպատակը և խնդիրները: **Թեմա 2.** Ուսուցման տեխնոլոգիայի հասկացական հիմքերը և գնահատումը: Ուսուցման տեխնոլոգիայի գնահատումը: **Թեմա 3.** Մանկավարժական ժամանակակից տեխնոլոգիաների տեսությունը: **Թեմա 4.** Մանկավարժական հետևում, մշտադիտարկում, շտկում: **Թեմա 5.** Ուսուցման միջոցներ և ռեսուրսներ: Դասավանդման և ուսումնառության միջոցներ և պարագաներ, դրանց պատրաստումը: **Թեմա 6.** Մեթոդի տեղն ու դերը մանկավարժական տեխնոլոգիաներում: **Թեմա 7.** Մանկավարժական մեթոդները, եղանակները, հնարները ուսուցման տեխնոլոգիական գործընթացում կիրառման փորձը: **Թեմա 8.** Անհատական ուսուցման խմբային օժանդակության տեխնիկան: Խմբային հետազոտություններ: Որոնումների մեթոդ: **Թեմա 9.** Ինտերակտիվ եղանակների կիրառումը ուսուցման տեխնոլոգիայի իրականացման ժամանակ: **Թեմա 10.** Գործնական ուսուցման քառափուլ մեթոդի կիրառումը: Գործնական ուսուցման ուղղորդիչ տեքստի մեթոդ: Նախագծերի մեթոդ:

**14. Հիմնական գրականության ցանկ**

1. Պետրոսյան Հ., Մանկավարժական ժամանակակից տեխնոլոգիաներ: Մոդուլային ուսումնական ձեռնարկ, Երևան, 2012:
2. Мухина С., Соловьева А., Современные инновационные технологии обучения. М., 2008.
3. Панфилова А., Игровое моделирование в деятельности педагога: учебное пособие для студ./ под. Ред. Слостенина В., Колесниковой И., М., 2006.

4. Селевко Г., Современные образовательные технологии: учебное пособие. М., Народное образование, 1998.

1. 0303/ Մ 09	2. Մանկավարժական հոգեբանություն	3. 3 ECTS կրեդիտ
4.4 ժամ/շաբաթ	5.6/6/0	
6.2-րդ կիսամյակ	7. առանց ընթացիկ գնահատման	
<p><b>8. Դասընթացի նպատակն</b> է ուսանողին ծանոթացնել ուսումնական գործընթացի վերլուծության ժամանակակից մոտեցումներին:</p>		
<p><b>9. Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝</b></p> <p><b>ա. մասնագիտական գիտելիք և իմացություն</b></p> <ul style="list-style-type: none"> <li>• բնութագրելու մանկավարժական գործունեության դերը ուսումնական գործընթացում,</li> <li>• մատնանշելու մանկավարժական հոգեբանության մեջ կիրառվող մեթոդների ամբողջականությունը, ներկայացնելու կրթության հոգեբանության դերը մանկավարժական հոգեբանության մեջ,</li> <li>• բացատրելու դաստիարակության հոգեբանության դերը մանկավարժական գործընթացում,</li> </ul> <p><b>բ. գործնական մասնագիտական կարողություններ</b></p> <ul style="list-style-type: none"> <li>• կարևորելու ուսուցչի դերը մանկավարժական գործընթացում,</li> <li>• մեկնաբանելու ուսուցման հոգեբանական առանձնահատկությունները,</li> <li>• որպես մանկավարժ գործնականում կիրառելու անձնային հոգեբանական մոտեցումներ,</li> </ul> <p><b>գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ</b></p> <ul style="list-style-type: none"> <li>• ընկալելու մանկավարժական ներգործության հոգեբանական մեխանիզմները և օրինաչափությունները:</li> </ul>		
<p><b>10. Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնարդյունքները.</b></p> <p><b>Ա2.</b> Մեկնաբանելու մանկավարժական տեսությունների զարգացումները, մանկավարժագիտության հիմնական հասկացությունները, հայեցակարգերը, կրթական համակարգերի զարգացման փուլերը, կրթության որակի չափորոշիչները:</p> <p><b>Ա3.</b> Նկարագրելու երեխայի և մեծահասակի, որպես ուսուցման սուբյեկտների, գործունեության հոգեբանական, տարիքային, անհատական առանձնահատկությունները և կիրառելու կոնֆլիկտների հաղթահարման ուղիները տարբեր տարիքի երեխաների զարգացման</p>		

գործընթացում:

**Ա4.** Ներկայացնելու անձի սոցիալականացման օրինաչափությունները և հաղորդակցման ձևերը:

**Բ1.** Կառավարելու, նախագծելու, կառուցելու, իրականացնելու և գնահատելու սեփական մանկավարժական գործունեությունը:

**Բ3.** Կազմակերպելու դասավանդողի և ուսումնառողի համատեղ գործունեությունը՝ ապահովելով սուբյեկտ-սուբյեկտ փոխհարաբերությունների կառուցումը, խորհրդատվության կիրառումը ուսումնադաստիարակչական գործընթացում:

**Գ6.** Մասնագիտական բարեվարքության կանոններին հետևելով՝ պատասխանատվությամբ իրականացնել մանկավարժի իր գործառույթները:

**11. Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.**

- դասախոսություններ (պրոբլեմային դասախոսություն, դասախոսություն երկուսով, դասախոսություն պրեսս-կոնֆերանս, դասախոսություն սադրանք, դասախոսություն խաղային մեթոդների կիրառմամբ),
- թիմային աշխատանքներ,
- քննարկումներ,
- հետազոտական սեմինարներ:

**12. Գնահատման մեթոդները և չափանիշներն են.**

Բանավոր քննություն՝ առավելագույնը 20 միավոր արժեքով:

**13. Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից.**

**Թեմա 1.** Մանկավարժական հոգեբանության առարկան և խնդիրները: **Թեմա 2.** Ուսումնական գործունեության կառուցվածքը: **Թեմա 3.** Մանկավարժական հոգեբանության մեթոդները: **Թեմա 4.** Մանկավարժի անձնային որակների և մասնագիտական պատրաստվածության հիմնախնդիրները: **Թեմա 5.** Մանկավարժական գործունեության շարժառիթները, մանկավարժական կոլեկտիվի հոգեբանություն: **Թեմա 6.** Մանկավարժական կարողություններ և հմտություններ: **Թեմա 7.** Մանկավարժական գործունեության կառուցվածքը: **Թեմա 8.** Դաստիարակության հոգեբանություն: **Թեմա 9.** Կրթության հոգեբանություն: **Թեմա 10.** Ուսուցման հոգեբանություն: **Թեմա 11.** Ուսուցչի անձի հոգեբանություն:

**14. Հիմնական գրականության ցանկ.**

1. Բայյան Ա., Մանկավարժական հոգեբանության հարցեր, Երևան, 1983:

2. Էլկոնին Դ., Կրտսեր դպրոցականի ուսուցման հոգեբանություն, Երևան, 1975:

3. Էլոյան Տ., Ուսուցիչը և նրա գործունեության հոգեբանական առանձնահատկությունները, Երևան, 1980:

4. Айсмонтас Б.Б., Педагогическая психология: схемы и тесты. - М.: Владос, 2004.

5. Басова Н.В., Педагогика и практическая психология, Ростов н/Д.: Феникс, 2000.

1.0303/ Մ 15	2. Հայոց լեզվի դասավանդման մեթոդիկա	3. 6 ECTS կրեդիտ
4.8 ժամ/շաբաթ	5.12/12/0	
6.2-րդ կիսամյակ	7. Եզրափակիչ գնահատումով	
<p><b>8. Դասընթացի նպատակն է սովորողներին ծանոթացնել հանրակրթական ուսումնական հաստատություններում հայոց լեզվի դասավանդման մեթոդիկային, նրա տարբեր առանձնահատկություններին, կիրառել տարբեր մեթոդներ ու միջոցներ գրականության դասավանդման գործընթացում:</b></p>		
<p><b>9. Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝</b></p> <p><i>ա. մասնագիտական գիտելիք և իմացություն</i></p> <ul style="list-style-type: none"> <li>• սահմանելու հայոց լեզվի ուսուցման հիմնական մեթոդները,</li> <li>• մեկնաբանելու հայոց լեզվի ուսուցման առանձնահատկությունները,</li> <li>• վերլուծելու ուսուցման տարբեր մեթոդների կիրառման առանձնահատկությունները,</li> <li>• մեկնաբանելու կրթական ժամանակակից տեխնոլոգիաները հայոց լեզվի ուսուցման գործընթացում,</li> <li>• արժևորելու ուսուցման տարբեր միջոցների արդյունավետությունը հայոց լեզվի ուսուցման գործընթացում:</li> </ul> <p><i>բ. գործնական մասնագիտական կարողություններ</i></p> <ul style="list-style-type: none"> <li>• համեմատելու ուսուցման տարբեր մեթոդների կիրառման առանձնահատկությունները հայոց լեզվի ուսումնառության գործընթացում,</li> <li>• որոշելու հայոց լեզվի ուսուցման մեթոդների կիրառման արդյունավետ եղանակները,</li> <li>• գործնականում կազմելու կամ ընտրելու հայոց լեզվի ուսումնառությանն անհրաժեշտ նյութեր, տեխնիկական միջոցներ,</li> <li>• գնահատելու սովորողների գիտելիքները՝ ընտրելով համապատասխան մեթոդներ, միջոցներ ու չափանիշներ:</li> </ul>		

**10. Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնարդյունքները.**

**U5.** Դասակարգելու ուսուցման մեթոդները և ընտրելու ուսումնական առարկայի դասավանդման արդյունավետ մեթոդիկա:

**U6.** Վերհանելու կրթության սուբյեկտների կրթական պահանջմունքերը և զարգացումը, կրթական միջավայրի հետ փոխներգործության բնույթը, ինքնազարգացման պայմանները:

**U7.** Կիրառելու տարբերակման և անհատականացման սկզբունքը ուսուցման բնագավառում:

**F1.** Կառավարելու, նախագծելու, կառուցելու, իրականացնելու և գնահատելու սեփական մանկավարժական գործունեությունը:

**F2.** Կիրառելու ուսուցման ակտիվ և ինտերակտիվ մեթոդներ ակտիվ ուսուցման գործընթացում:

**Գ2.** Նոր և անձանոթ իրադրություններում կիրառելու ուսուցման ոլորտի հայեցակարգային և մեթոդաբանական սկզբունքները տեսական և գործնական խնդիրների լուծման համար:

**Գ3.** Կիրառելու SՀS-ները և այլ մասնագիտական գործիքները՝ ուսուցման գործընթացում, ինչպես նաև հետազոտությունների իրականացնելու համար:

**Գ4.** Պատասխանատվություն ստանձնելու համագործակցային միջավայրի ստեղծման և կառավարման ու համատեղ գործունեության արդյունքների համար:

**Գ6.** Մասնագիտական բարեվարքության կանոններին հետևելով՝ պատասխանատվությամբ իրականացնելու մանկավարժի իր գործառույթները:

**11. Կիրառվում են դասավանդման և ուսումնասության հետևյալ ձևերն ու մեթոդները.**

- գործնական աշխատանքներ

**12. Գնահատման մեթոդները և չափանիշները.**

Երկու ընթացիկ քննությունը՝ յուրաքանչյուրը 5 միավոր արժեքով: Եզրափակիչ քննություն՝ իրականացվում է բանավոր քննության ձևաչափով՝ առավելագույնը 10 միավոր արժեքով:

**13. Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից.**

**Թեմա 1.** Հայոց լեզվի ուսուցման մեթոդները, ուսումնական աշխատանքի կազմակերպման ձևերը:

**Թեմա 2.** Աշակերտի դատողական կարողությունների զարգացումը լեզվի ուսուցման ընթացքում:

**Թեմա 3.** Աշակերտի խոսքի զարգացումը (բառապաշարի հարստացում, բանավոր խոսքի զարգացում, գրավոր խոսքի մշակում, գրավոր աշխատանքների ստուգում և գնահատում): **Թեմա 4.**

Հնչյունաբանության ուսուցումը: **Թեմա 5.** Բառագիտության ուսուցումը: **Թեմա 6.** Ձևաբանության

ուսուցումը: **Թեմա 7.** Շարահյուսության ուսուցումը: **Թեմա 8.** Ոճագիտական իրողությունների

ուսուցումը: **Թեմա 9.** Գործնական գրությունների առանձնահատկությունների ուսուցումը:



**14. Հիմնական գրականության ցանկ**

1. Գյուլբուդադյան Ս., Հայոց լեզվի մեթոդիկա, Երևան, 1978:
2. Աբրահամյան Ս., Աշակերտի խոսքի զարգացումը, Երևան, 1973:
3. Ավետիսյան Յու., Զաքարյան Հ., Հայոց լեզու, Երևան, 2012:
4. Բաղիկյան Խ., Ժամանակակից հայոց լեզվի շարադասությունը և նրա ուսուցումը, Երևան, 1984:
5. Բաղիկյան Խ., Կոչականը և նրա ուսուցումը, Երևան, 1982:
6. Բեդիրյան Պ., Հայ լեզուն և մեր խոսքը, Երևան, 1999:

1. 0303/ Մ 16	2. Հայ գրականության դասավանդման մեթոդիկա	3. 6 ECTS կրեդիտ
4.8 Ժամ/շաբաթ	5. 18/6/0	
6.2-րդ կիսամյակ	7. եզրափակիչ գնահատումով	
<p><b>8. Դասընթացի նպատակն է սովորողներին ծանոթացնել հանրակրթական ուսումնական հաստատություններում հայ գրականության դասավանդման մեթոդիկային, նրա առանձնահատկություններին:</b></p>		
<p><b>9. Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝</b></p> <p><i>ա. մասնագիտական գիտելիք և իմացություն</i></p> <ul style="list-style-type: none"> <li>• ներկայացնելու հայ գրականության ուսուցման հիմնական մեթոդները,</li> <li>• մեկնաբանելու հայ գրականության ուսուցման առանձնահատկությունները հանրակրթական դպրոցում,</li> <li>• վերլուծելու ուսուցման տարբեր մեթոդների կիրառման առանձնահատկությունները հայ գրականության դասավանդման գործընթացում,</li> <li>• մեկնաբանելու ուսուցման ժամանակակից տեխնոլոգիաները հայ գրականության ուսուցման գործընթացում,</li> <li>• արժևորելու ուսուցման տարբեր միջոցների արդյունավետությունը հայ գրականության ուսուցման գործընթացում:</li> </ul> <p><i>բ. գործնական մասնագիտական կարողություններ</i></p> <ul style="list-style-type: none"> <li>• համեմատելու ուսուցման տարբեր մեթոդների կիրառման առանձնահատկությունները, հայ գրականության ուսումնառության գործընթացում,</li> <li>• որոշելու հայ գրականության ուսուցման մեթոդների կիրառման արդյունավետ եղանակները,</li> </ul>		

- գործնականում կազմելու կամ ընտրելու հայ գրականության ուսումնառությանն անհրաժեշտ նյութեր, տեխնիկական միջոցներ,
- գնահատելու սովորողների գիտելիքները հայ գրականությունից՝ ընտրելով համապատասխան մեթոդներ, միջոցներ ու չափանիշներ:

**10.Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնարդյունքները.**

**U5.** Դասակարգելու ուսուցման մեթոդները և ընտրելու ուսումնական առարկայի դասավանդման արդյունավետ մեթոդիկա:

**U6.** Վերհանելու կրթության սուբյեկտների կրթական պահանջմունքերը և զարգացումը, կրթական միջավայրի հետ փոխներգործության բնույթը, ինքնազարգացման պայմանները:

**U7.** Կիրառելու տարբերակման և անհատականացման սկզբունքը ուսուցման բնագավառում:

**F1.** Կառավարելու, նախագծելու, կառուցելու, իրականացնելու և գնահատելու սեփական մանկավարժական գործունեությունը:

**F2.** Կիրառելու ուսուցման ակտիվ և ինտերակտիվ մեթոդներ ակտիվ ուսուցման գործընթացում:

**Գ2.** Նոր և անձանոթ իրադրություններում կիրառելու ուսուցման ոլորտի հայեցակարգային և մեթոդաբանական սկզբունքները տեսական և գործնական խնդիրների լուծման համար:

**Գ3.** Կիրառելու SՅՏ-ները և այլ մասնագիտական գործիքները՝ ուսուցման գործընթացում, ինչպես նաև հետազոտությունների իրականացնելու համար:

**Գ4.** Պատասխանատվություն ստանձնելու համագործակցային միջավայրի ստեղծման և կառավարման ու համատեղ գործունեության արդյունքների համար:

**Գ6.** Մասնագիտական բարեվարքության կանոններին հետևելով՝ պատասխանատվությամբ իրականացնել մանկավարժի իր գործառույթները:

**11.Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.**

- գործնական աշխատանք
- ռեֆերատներ,
- ինտերակտիվ մեթոդներ:

**12.Գնահատման մեթոդները և չափանիշները.**

Երկու ընթացիկ քննությունը՝ յուրաքանչյուրը 5 միավոր արժեքով: Եզրափակիչ քննություն՝ իրականացվում է բանավոր քննության ձևաչափով՝ առավելագույնը 10 միավոր արժեքով:

**13. Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից.**

**Թեմա 1.** Հայ գրականության դասավանդման մեթոդիկայի նպատակը, խնդիրները: **Թեմա 2.** Համագործակցային ուսուցման տեխնոլոգիաները հայ գրականության դասերին: **Թեմա 3.** Բանավեճ և գրական դասի կիրառման առանձնահատկությունները հայ գրականության դասերին: **Թեմա 4.** Մանրապատում, Վենի դիագրամի կիրառությունները հայ գրականության դասերին: **Թեմա 5.** 5-րդ դարի հայ մատենագիտության ուսուցումը հանրակրթական դպրոցում: **Թեմա 6.** Գր. Նարեկացու քնարերգության դասավանդման մեթոդիկան միջին դպրոցում: **Թեմա 7.** Հայ միջնադարյան գրականության դասավանդման առանձնահատկությունները: **Թեմա 8.** Հայ նոր գրականության զարգացման փուլերը և դրա ուսուցման մեթոդիկան: **Թեմա 9.** Հովհ. Թումանյանի գրական ժառանգության ուսուցման մեթոդիկան: **Թեմա 10.** Ավ. Իսահակյանի քնարերգության ուսուցումը: **Թեմա 11.** Հայ նորագույն գրականության շրջափուլերը: Դրանց ուսուցումը հանրակրթական դպրոցում: **Թեմա 12.** Ե. Չարենցի ստեղծագործական ճանապարհը և դրա ուսուցման մեթոդիկան: **Թեմա 13.** Ալ. Բակունցի արձակի դասավանդման մեթոդիկայի առանձնահատկությունները: **Թեմա 14.** Պ. Սևակի քնարերգությունը և դրա դասավանդման մեթոդիկան: **Թեմա 15.** Հր. Մաթևոսյանի արձակի ուսուցումը հանրակրթական դպրոցում:

**14. Հիմնական գրականության ցանկ**

1. Արզումանյան Ա. Գրականության դասավանդման մեթոդներ և ձևեր, Երևան, 2014:
2. Գասպարյան Դ., Տոդանյան Ն. Հայ գրականության մեթոդական ձեռնարկ, Երևան, 2013:
3. Կառուցողական կրթության հիմունքները և մեթոդները: Ձեռնարկ ուսուցիչների համար, Երևան, 2004:

1. 0303/ Մ 17	2. Անգլերենի դասավանդման մեթոդիկա	3. 6 ECTS կրեդիտ
4.8 ժամ/շաբաթ	5. 18/6/0	
6.2-րդ կիսամյակ	7. եզրափակիչ գնահատումով	
<p><b>8. Դասընթացի նպատակն է</b> սովորողներին ծանոթացնել անգլերենի դասավանդման մեթոդիկայի ձևավորմանը, զարգացման պատմությանը, բացահայտել տեսությունների զարգացման միտումները, մեթոդները, հիմնավորել ժամանակակից սկզբունքների, ռազմավարությունների, տեխնոլոգիաների կիրառման արդյունավետությունը, ներկայացնել գնահատման համակարգերը և դրանց կիրառման դաշտը, հասցեատիրոջը, ուսուցման օբյեկտներին և սուբյեկտներին:</p>		

## **9. Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝**

### **ա. մասնագիտական գիտելիք և իմացություն**

- ներկայացնելու անգլերենի դասավանդման մեթոդիկայի նպատակը, խնդիրները, մեթոդների պատմությունը.
- հիմնավորելու հաղորդակցական մեթոդների արդյունավետությունը,
- բացահայտելու անգլերենի դասավանդման մեթոդիկայի ուսուցման, ուսումնառության առանձնահատկությունները, օրինաչափությունները,
- կիրառելու համապատասխան մեթոդներ, առաջադրանքներ, վարժություններ անգլերենի ուսուցման գործընթացում:

### **բ. գործնական մասնագիտական կարողություններ**

- համեմատելու ավանդական, դասական և այլընտրանքային օտար լեզուների դասավանդման մեթոդները և հիմնավորելու հաղորդակցական մոտեցման կիրառման արդյունավետությունը,
- ներկայացնելու ընկալողական և արտադրողական կարողությունները և հմտությունները ըստ ընկալողական, նախախոսքային և խոսքային վարժությունների և առաջադրանքների, գործնականում, ըստ ուսումնական իրավիճակի ընտրել բովանդակության կամ առաջադրանքի վրա հիմնված առաջադրանքներ ստեղծել անգլերենից ընթացիկ և ավարատական ստուգման թեստեր՝ ըստ մոդելի կամ ցուցանմուշի:

## **10. Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնարդյունքները.**

**Ա5.** Դասակարգելու ուսուցման մեթոդները և ընտրելու ուսումնական առարկայի դասավանդման արդյունավետ մեթոդիկա:

**Ա6.** Վերհանելու կրթության սուբյեկտների կրթական պահանջմունքերը և զարգացումը, կրթական միջավայրի հետ փոխներգործության բնույթը, ինքնազարգացման պայմանները:

**Ա7.** Կիրառելու տարբերակման և անհատականացման սկզբունքը ուսուցման բնագավառում:

**Բ1.** Կառավարելու, նախագծելու, կառուցելու, իրականացնելու և գնահատելու սեփական մանկավարժական գործունեությունը:

**Բ2.** Կիրառելու ուսուցման ակտիվ և ինտերակտիվ մեթոդներ ակտիվ ուսուցման գործընթացում:

**Գ2.** Նոր և անձանոթ իրադրություններում կիրառելու ուսուցման ոլորտի հայեցակարգային և մեթոդաբանական սկզբունքները տեսական և գործնական խնդիրների լուծման համար:

**Գ3.** Կիրառելու S2S-ները և այլ մասնագիտական գործիքները՝ ուսուցման գործընթացում, ինչպես

նան հետազոտությունների իրականացնելու համար:

**Գ4.** Պատասխանատվություն ստանձնելու համագործակցային միջավայրի ստեղծման և կառավարման ու համատեղ գործունեության արդյունքների համար:

**Գ6.** Մասնագիտական բարեվարքության կանոններին հետևելով՝ պատասխանատվությամբ իրականացնել մանկավարժի իր գործառույթները:

**11. Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.**

- սեմինար պարապմունքներ,
- գործնական առաջադրանքներ

**12. Գնահատման մեթոդները և չափանիշները.**

Երկու ընթացիկ քննությունը՝ յուրաքանչյուրը 5 միավոր արժեքով: Եզրափակիչ քննություն՝ իրականացվում է բանավոր քննության ձևաչափով՝ առավելագույնը 10 միավոր արժեքով:

**13. Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից.**

**Թեմա 1.** Անգլերեն լեզվի դասավանդումը որպես գիտություն: **Թեմա 2.** Անգլերենի դասավանդման նպատակը որպես հանրամանկավարժական և մեթոդական կարգ: **Թեմա 3.** Անգլերենի ուսուցման ավանդական և ժամանակակից մեթոդները՝ քերականական-թարգմանական, ուղիղ, տեսալսողական, հաղորդակցական: **Թեմա 4.** Անգլերենի հնչյունաբանության ուսուցում: **Թեմա 5.** Անգլերենի բառապաշարի ուսուցում: **Թեմա 6.** Անգլերենի քերականության ուսուցում: **Թեմա 7.** Պրոդուկտիվ և ռեցեպտիվ քերականություն: **Թեմա 8.** Քերականական նյութի մատուցման մեթոդներ: **Թեմա 9.** Բանավոր հաղորդակցման (ունկնդրելը, խոսելը՝ մենախոսություն, երկխոսություն) ուսուցում: **Թեմա 10.** Խոսելը՝ մտքերը բանավոր արտահայտելը (մենախոսություն, երկխոսություն) որպես վերարտադրողական (պրոդուկտիվ) խոսքային գործունեության տեսակ: **Թեմա 11.** Մենախոսության ուսուցում: **Թեմա 12.** Երկխոսության ուսուցում: **Թեմա 13.** Միջմշակութային ուսուցում: **Թեմա 14.** Գրավոր հաղորդակցում (ընթերցելը, գրելը): **Թեմա 15.** Ընթերցանության ուսուցման արդյունավետությունն ապահովող մեխանիզմներ: **Թեմա 16.** Ընթերցանության տեսակների (թռուցիկ, ընդհանուր բովանդակության ընկալման, որոնողական, մանրագնին) դասակարգում: Ընթերցանության տեխնիկայի ուսուցում: **Թեմա 17.** Ընթերցանության տարբեր տեսակների մակարդակների բնութագրում: Ընթերցանության տեսակների ձևավորման մեթոդներ ու ռազմավարություններ: **Թեմա 18.** Տեքստերի բովանդակության ընկալման ստուգում: **Թեմա 19.** Գրավոր խոսքի ուսուցում: Գրավոր խոսքի ուսուցման նպատակները: **Թեմա 20.** Գրելու տեխնիկա (տառուսուցում, ուղղագրություն) և գրավոր խոսքի (մտքերը գրավոր արտահայտելու)

կարողություն: **Թեմա 21.** Վարժությունների համակարգ՝ ուղղված գրելու տեխնիկայի և գրավոր խոսքի հմտությունների ու կարողությունների զարգացմանը: **Թեմա 22.** Գրավոր խոսքի ստուգման ձևերը: **Թեմա 23.** Խոսքային կարողությունների ստուգման այլընտրանքային ձևեր: **Թեմա 24.** Անգլերենի ուսուցումը մշակույթների երկխոսության համատեքստում:

**14. Հիմնական գրականության ցանկ**

